ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ
ԱՄԲԵՐԴԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИ МАРЗ
ЭЧМИАДЗИНСКИ РЕГИОН
СЕЛЬСКАЯ ОБЩИНА АМБЕРД

N 01-85
«05» ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2012թ

ՀԵՌ.(093) 32-59-62
ТЕЛ.(093) 32-59-62

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ՝ Ա. Ղահրամանյան

Կից ներկայացնում ենք Ձեզ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամբերդի գյուղական համայնքի ղեկավարի 2012 թվականի նոյեմբեր ամսվա ընթացքում ընդունած որոշումներ և հայտնում այն մասին, որ սույն ամսվա ընթացքում արձակած կարգադրություններ չունի:

Համայնքի ղեկավար Ս. Բաբայան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 10908-12
«07» 12 2012 թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԱՄԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 10-Ա

«01» ՆՈՅԵՄԲԵՐԻ 2012թ.          գ. ԱՄԲԵՐԴ

## ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Համայնքային ծառայության մասին» օրենքի 19-րդ հոդվածի առաջին մասով և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի սեպտեմբերի 11-ի «Համայնքային ծառայության ատեստավորման կարգը սահմանելու մասին » N15-Ն հրամանով.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամբերդի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայողների՝ աշխատակազմի քարտուղար՝ Սամվել Սարգսյանի (ծածկագիր 1.2-1), առաջատար մասնագետ՝ Գայանե Նավասարդյանի (ծածկագիր 3.1-1) և Գարուշ Դարիբյանի (3.1-2), առաջին կարգի մասնագետ՝ Անահիտ Աղամյանի (ծածկագիր 3.2-1), երկրորդ կարգի մասնագետ՝ Աշոտ Գաբրիելյանի (ծածկագիր 3.3-1) համար անցկացնել ատեստավորում:
2. Ատեստավորումը կանցկացվի Արմավիրի մարզի Ամբերդի գյուղապետարանում 2012 թվականի դեկտեմբերի 19-ին, գլխավոր պաշտոնյայի համար ժամը $11^{00}$ –ին, իսկ կրտսեր պաշտոնյաների համար ժամը $14^{00}$ –ին :
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝      Ս. Բաբայան

2012 թվականի նոյեմբերի «01»
գ. Ամբերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԱՄԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 11-Ա

«01» ՆՈՅԵՄԲԵՐԻ 2012 թ                                                                 գ. Ամբերդ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 9-Ա

Արմավիրի մարզի բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող հաշմանդամ և զոհված զին ծառայողների /ազատամարտիկների/ ընտանիքների ցուցակը հաստատելու մասին.

Քննարկելով Ամբերդ գյուղի բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող հաշմանդամ դարձած և զոհված զինծառայողների, ազատամարտիկների դիմումները և ելնելով վերոհիշյալից, հիմք ընդունելով Ամբերդ համայնքի հաշմանդամ դարձած և զոհված զինծառայողների /ազատամարտիկների/ ընտանիքներին բնակարանային հաշվառման վերցնելու մասին գյուղապետարանի բնակարանային հանձնաժողովի որոշումը.

Որոշում եմ՝

1. Հաստատել բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցողների ցանկը.
2. Հաստատել Ամբերդ գյուղի բնակիչ՝ զոհված զինծառայող Արարատ Ժորայի Թադևոսյանի մայր՝ Մարիամ Գևորգի Թադևոսյանի ընտանիքի բնակարանային պայմանները բարելավելու հայցը և այդ նպատակով դիմել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին՝ Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարությանը համապատասխան միջնորդություն ներկայացնելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար                    Մ. Բաբայան

2012 թվականի նոյեմբերի «02»

գ. Ամբերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԱՄԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 12-Ա

«06» ՆՈՅԵՄԲԵՐԻ 2012թ. Գ. ԱՄԲԵՐԴ

## ԼԵՎԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք համարելով թիվ 20 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012 թվականի սեպտեմբերի 14-ի N 411-Ա որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2012 թվականի նոյեմբերի 6-ից դադարեցնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամբերդի գյուղապետի տեղակալ՝ Լևիկ Վարդանյանի լիազորությունները:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Մ. Բաբայան

2012 թվականի նոյեմբերի «06»

գ. Ամբերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԱՄԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 13-Ա

«22» ՆՈՅԵՄԲԵՐԻ 2012թ. — գ. ԱՄԲԵՐԴ

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Իրավական ակտերի մասին» օրենքի 72-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի «բ» ենթակետով և հիմք համարելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2012 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 02/10/3904-12 գրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամբերդ համայնքի ղեկավարի 2012 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 8-Ա «Համայնքի ղեկավար ընտրվելու մասին» և թիվ 9-Ա «Ավագանու անդամներ ընտրվելու մասին» որոշումները:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ա. Բաբայան

Կ.Տ.

2012 թվականի նոյեմբերի «22»

գ. Ամբերդ